

=====

Օգոստոս 5, 2004

Պրն Փանոս Թիթիպեանի «Ըլլանք Զգաստ Եւ Լրջախոհ» գրութիւնը, լոյս տեսած «Ասպարէզ»ի Յուլիս 21, 2004-ի «Նամականի» բաժնին մէջ, Դոկտ. Ն.Պէյլէրեանի «Իրաւական Վերլուծում Կ. Մելգոնեանի Կտակի» խորագրուած յօդուածին կցուած լուսանկարին առնչութեամբ, պարզապէս անիմաստ և անհեթեթ ճամարտակութիւն կը նկատեմ ու նաեւ ձախաւեր փորձ՝ ազատ խօսքն ու արտայայտութիւնը կաշկանդելու:

Պէտք է յայտնեմ որ անձնապէս շատ ալ մեծ կարեւորութիւն չ'ընծայեցի խնդրոյ առարկայ այդ նկարին, որ իբր թէ, ինչպէս Պրն յօդուածագիրը կը մատնանշէ, «ՀԲԸՄիութեան Նախագահ Պրն Պերճ Սեդրակեանը եւ Տիկ Լուիզ Սիմոն-Մանուկեանը իբրև թրքաբարոյ ոճրագործներ ներկայացնող անհեթեթ ցուցատախտակ մը» կը պարունակէ: Եւայլն...: Հաւանաբար ճշմարտութիւն մը կայ այն ասացուածքին մէջ թէ՛ «մէկ նկար՝ հազար խօսք ու բառ կ'արժէ», որով կարելի կ'ըլլայ բացատրել թէ ինչու՞ Պրն Թիթիպեան այդքան փութկոտութեամբ իր ուշադրութեան առանցքը դարցուցած է այդ լուսանկարը, Դոկտ Ն.Պէյլէրեանի խիստ շահեկան եւ ներհուն յօդուածը անտեսելու աստիճան: Բայց եւ այնպէս որքան փափաքելի պիտի ըլլար որ Պրն Թիթիպեան ինծի՛ միանար շնորհաւորելու համար նախ Դոկտ. Պէյլէրեանը իր այդքան խորթափանց և տրամաբանականօրէն կուռ յօդուածին համար եւ ապա «Ասպարէզ»ի խմբագրութիւնը՝ այդ յօդուածը հրատարակելուն համար:

Դոկտ. Պէյլէրեան «Մելգոնեան» Հաստատութեան 1955-ի շրջանաւարտ է եւ, ինչպէս յայտնի է, իր յօդուածը կը վերաբերի այն Կտակին կամ Համաձայնագրին որ Կարապետ Մելգոնեան 1925-ին կնքեց ՀԲԸՄի հետ եւ այդպէս Մելգոնեան Բարերարներու ամբողջ հարստութիւնը (նեոարեալ Մ.Կ.Հաստատութիւնը իր կալուածներով՝ Կիպրոսի մէջ) իբրեւ ժառանգ փոխանցուեցաւ Կ. Պոլսոյ Պատրիարքարանէն՝ ՀԲԸՄի հոգատարութեան և յանձանձումին:

Եւ ահա՛ այդ համաձայնագրին ստորագրութենէն մօտ ութ տասնամյակ յետոյ ՀԲԸՄիութեան Նիւ Եորքի Կեդրոնական Վարչութեան Մարտ 16, 2004-ի յայտարարած որոշումը՝ «Մելգոնեան» Կրթական Հաստատութիւնը 2005-ի Յունիսին վերջնականապէս փակելու մասին: Սա անշուշտ ուրիշ բան չէ՛ եթէ ոչ ապօրինի խախտում եւ ոտնահարում այդ Համաձայնագրին, այլ մանաւանդ աղաղակող փաստ մը երդմնապանցութեան:

Մենք, Մելգոնեանցիներս, երախտաշատ պաւակներն երբ Անմահ մեր Բարերարներուն եւ մեզի կ'իյնայ ի գին ամէն պոհողութեան աշխատիլ որպէսզի Մելգոնեան Եղբայրներու տեսլականը եւ մեզի փոխանցուած աւանդը պահուի, պահպանուի և յարատեւէ՛ Կիպրոսի մէջ:

Հայաստանի մէջ բացուելիք հարիւր սենեականոց, Քէմբ Նուպարի ոճով, Մելգոնեան Կեդրոնը չենք խորհիր որ պիտի կարենայ փոխարինել Մելգոնեանի նման գիշերօթիկ վարժարանի մը դերը Սփիւռքի նորահաս սերունդին կրթութիւն և հայեցի դաստիարակութիւն ջամբելու տեսակետէն: Մենք ի սրտէ յաջողութիւն կը մաղթենք եւ կը պօրակցինք ՀԲԸՄիութեան բոլոր ծրագիրներուն, ըլլան անոնք Սփիւռքի մէջ թէ Հայրենիքի: Բայց եւ այնպէս, այդ ծրագիրներուն իրագործումը պէտք չէ՛ որ ըլլայ ի գին եւ ի վնաս Մելգոնեան Հաստատութեան:

Պրն Փանոս Թիթիպեան նոյնպէս Մելգոնեանցի է, 1946-ի շրջանաւարտ:
Ան համաշխարհային Բ. պատերազմի դժնդակ տարիները անցուցած պէտք է
ըլլայ ուրեմն «Մելգոնեան»ի յարաբերաբար ապահով երդիքին տակ եւ
առնուազ վեց տարի Մելգոնեան Բարերարներու Հայ Ազգին ժառանգ
ձգած Կտակէն օգտուած է իբրեւ ձրիավարժ գիշերօթիկ աշակերտ:
«Հայակերտումի եւ Մարդակերտումի այդ դարբնոց»էն ներս ան ստացած է
բարձրորակ ուսում եւ կրթութիւն, Հայեցի դաստիարակութիւն, կայլն:
Պրն Թիթիպեանի երախտագիտական զգացումները, իր յառաջացած տարիքին
բերումով, չեմ կարծեր թէ նուազած կրնան ըլլալ Մելգոնեան Բարերարներուն
հանդէպ: Բայց եւ այնպէս, Պրն Թիթիպեան միաժամանակ ջերմեռանդ
ջատագով մըն է ՀԲԸՄ Կեդրոնական Վարչութեան «Մելգոնեան»ը փակելու
որոշումին: Հետեւաբար, Պրն Թիթիպեանի դիրքորոշումը եւ ընթացքը
Մելգոնեան Բարերարներու ժառանգ ձգած «Մելգոնեան» Կրթ. Հաստատութեան
նկատմամբ անվայել է եւ անյարիր՝ Մելգոնեանցիի իր հանգամանքին:

Վերջացնելու համար՝ ահաւասիկ «Մելգոնեան» Հաստատութեան քայլերգին
վերջին քառեակը: Բոլոր Մելգոնեանցիներուն համար հիմայ այլեւս
ժամանակն է վայն բարձրադաղակ եւ միաբերան երգելու.

«Երախտպարտ պաւակներդ ենք հարապատ,
Կուռ շարքերով պիտ' պայքարինք անվըհատ,
Եւ չ'թողունք որ «վըճիռներ» անօրէն,
Անմահ Լուսոյ սուրբ Տաճարն այս քայքայեն:»

Մնամ յարգանք՝

ԿԱՐՕ ԳԱՍԱՊԵԱՆ
(1954- ի շրջ.)
Northridge, CA.